

Դերեմիկ Դեմիրչեան, «Ուլիստուրմեք, Ասուդի Իէֆիարը», հրատ. «Մտ. Լիտիցեան և ընկ.» 1905, Թիֆլիս, 7 կողէկ:

Պ. Դեմիրչեան իր ներկայ գրեյդիով մեզ տալիս է երկու պատկեր: Առաջինը՝ «Ուլիստուրմեք» մի յուզիչ, բայց սովորական ողբերգութիւն է, որ ամեն օր կատարուած է լոռ, անշուշտ մեր գիւղերում: Կամազուրկ, իրաւագուրկ հայ աղջիկը իր սիրտն, ինչպէս և իր մարմինը տալիս է ակամայ նրան, որին չի սիրում: «Հպարտ վարդը ոլորեցին փշի հետ, նա էլ լացեց, թառամեց ու թափուեց...» Եթէ լեռան այդ սպիտակ շուշանը, նա, որ «ուր գնար—կրակ էր տանում հետը», չփաթաթէին այդ գոսացած ճիւղին, չզոհաբերէին այդ հասակաւոր ու անզգայ մարդու անասնական կիրքերին, միթէ աստղերը կը թափուէին, երկիրը իր հաւասարակշռութիւնը կը կորցնէր: Գիւղական իրականութեան անողոք տրամաբանութիւնը այդպէս է հրամայում սակայն. կինը սիրտ ունի, բայց լեզու երբէք. նա պիտի լռէ. ու լռում է: «Բայց նրա հոգին փոթորկող զգացումը չմեռաւ, այլ թագնուեց նրա սրտի մի անկիւնում, կուչ եկաւ, որ մարդիկ չտեսնեն ու հալածեն: Սէրը գտաւ իր գոյութիւնը ապահովելու գաղտնիքն ու հնարը... Բիրտ ու վայրենի մարդկանց դոհ—այդ զգացմունքներով լի աղջիկը իրան նուիրած երիտասարդին իր կնքահայրը դարձրեց»:

Ու մինչդեռ գարունը նաշխել է սար ու ձոր, մինչդեռ ընտելեան հետ զարթնող գիւղը, տօն օրով դիմում է ուխտագնացութեան, մենք տեսնում ենք «փշի հետ ոլորած հպարտ վարդը» երեխան գրկին դէպի մատուռ բարձրանալիս: Նա յոգնել է, սիրտինքն ու օգնութեան կարօտ է: Նրա մարդը՝ նրա յոգնութեան ու նրա ցաւին անտարբեր, շարունակում է իր ճամբան հռահուով և ուրիշների հետ կատակելով: «Բաւորն» է, որ թրթուում է նրա շուրջը, իր գաղտուկ, վախկոտ, բայց անհուն սէրը նրա տկարութեան վահան շինած. վերցնում է երեխային և շնչում. «առաջ անցիր» Ու նրանք շարունակում են գնալ...

Այս է պատկերը. մի քնքուշ, ոչ այնքան զօրեղ պատկեր, որի երանգները բաւական նուրբ են և ճոխ:

Պ. Դեմիրչեան, ինչպէս իր բանաստեղծութիւնների մէջ, խոր և ուժեղ մտածողի յատկութիւններով հանդէս չի գալիս. նա նկարագրող է և նրա գոյները թարմ են, թեթեւ ու օդային:

Յաջորդ պատկերը՝ «Աշուդի հէքիաթը» իր նկարագրական մասով դարձեալ յաջող, թոյլ է ֆոնի, մտածումի տեսակէտից: